

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ



Հինգշաբթի, 2 Յունուար. Ամանորի եւ Սուրբ Ծննդեան տօներու առիթով Երուսաղէմի Հայ Պատրիարք՝ Տ. Նուրհան Արք. Մանուկեան, ընկերակցութեամբ Դիւանապետ՝ Տ. Աղան Վրդ. Գոգչեանի շնորհաւորութեան գնաց Սուրբ Երկրի Պապական Նուիրակ՝ Գերապատիւ Տ. Ատուֆօ Տիւտօ Լլանայի:

Հինգշաբթի, 9 Յունուար. Առաւօտեան ժամը 11:00-ին, Ամանորի եւ Սուրբ Ծննդեան տօներու առիթով Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը՝ գլխաւորութեամբ Գերաշնորհ Տ. Կորին Եպս. Բաղդասարեանի, շնորհաւորութեան գնաց Յունաց Ամենապատիւ Տ. Թէոֆիլոս III Պատրիարքին եւ Միաբանութեան:

Նոյն օրը, Երեկոյեան ժամը 16:00-ին, Ամանորի եւ Սուրբ Ծննդեան տօներու առիթով Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը դարձեալ գլխաւորութեամբ Գերաշնորհ Տ. Կորին Եպս. Բաղդասարեանի, շնորհաւորութեան գնաց Սուրբ Երկրի մէջ Հայերու հետեւակ՝ Ասորի, Ղպտի եւ Հապէշ եկեղեցիներու եպիսկոպոսներուն եւ միաբանութեանց:

Երկուշաբթի, 13 Յունուար. Ամանորի եւ Սուրբ Ծննդեան տօներուն առիթով Իսրայէլի նախագահ՝ Վսեմաշուք Տիար Իսահակ Հերցոկի կողմէ կազմակերպուած ընդունելութեան Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան կողմէ ներկայ գտնուեցաւ Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեան՝ ընկերակցութեամբ Դիւանապետ՝ Տ. Աղան Վրդ. Գոգչեանի:

Երկուշաբթի, 20 Յունուար. Առաւօտեան ժամը 10:00-ին, Յունաց Ամենապատիւ Տ. Թէոֆիլոս III Պատրիարք Սրբազանն իր միաբաններով շնորհաւորական այցելութիւն տուաւ Հայոց Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանին եւ Սրբոց Յակոբեանց միաբանութեան: Հայոց Վանքի մուտքին Յունաց Պատրիարքը դիմաւորեցաւ խունկով եւ վարդաշուրով, ապա առաջնորդուեցաւ Պատրիարքարան:

Ժամը 10:45-էն սկսեալ յաջորդաբար Պատ-

րիարքարան շնորհաւորելու եկան Լատին Պատրիարք՝ Ամենապատիւ Տ. Փիերպատիսթա Արք. Փիցապալա՝ իր միաբաններով եւ Կաթոլիկ, Բողոքական, Ասորի, Ղպտի եւ Հապէշ Ուղղափառ եկեղեցիներու հոգեւոր պետերը եւ ներկայացուցիչները:

Չորեքշաբթի, 22 Յունուար. Սուրբ Ծննդեան տօնին առիթով Սուրբ Երկրի Պապական Նուիրակ՝ Գերապայծառ Տ. Ատուֆօ Արք. Տիւտօ Լլանա՝ ընկերակցութեամբ նուիրակութեան առաջին քարտուղարի՝ այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի հետ:

Հանդիպմանը ներկայ էր նաեւ Սուրբ Աթոռոյս Դիւանապետ՝ Տ. Աղան Վրդ. Գոգչեան:

Կիրակի, 9 Փետրուար. Առաւօտեան ժամը 10:30-ին, ի պատիւ Սուրբ Երկրի Պապական Նուիրակի առաջին քարտուղար՝ Մոնսինիոր Նատալէ Ալպինոյի, որ երեք տարի Սուրբ Երկրին մէջ ծառայելէ ետք պիտի մեկնի նոր առաքելութեան, Նոթր Ծամի մէջ մատուցուեցաւ Սուրբ Պատարագ:

Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան կողմէ ներկայ գտնուեցան Աւագ Թարգման՝ Տ. Վազգէն Վրդ. Ալէքեան եւ Դիւանապետ՝ Տ. Աղան Վրդ. Գոգչեան:

Երեքշաբթի, 11 Փետրուար. Երեկոյեան ժամը 4-ին, Երուսաղէմի Հին քաղաքի նորանշանակ ոստիկանապետ՝ փոխգնդապետ Դվիր Թամիմ, ընկերակցութեամբ սրբատեղեաց ոստիկանապետ՝ փոխգնդապետ էյալ Աւրահամի, Հին քաղաքի ոստիկանատան քրիստոնեաներու բաժնի պատասխանատու սպայ՝ Տիար Օլեկ Վասկելիցի եւ Ս. Յարութեան տաճարի պատասխանատու ոստիկան՝ Տիար Անան Շանանի քաղաքավարական այց մը տուին Երուսաղէմի Հայ Պատրիարք՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Արք. Մանուկեանին:

Հանդիպման ընթացքին քննարկուեցան Սըրբատեղեաց առնչուող եւ քրիստոնեաներու նկատմամբ հրեայ ծայրայեղականներու դրսեւորած անհանգուրժողական վերաբերմունքի վերաբերեալ

հարցեր: Փոխ-գնդապետ Դվիր Թամիմ խոստացաւ, թէ համագործակցութեամբ իր կարելին պիտի ընէ հնարաւորինս խնդիրներէն խուսափելու համար:

Հանդիպմանը ներկայ էին նաեւ Դիւանապետ՝ Տ. Աղան Վրդ. Գոգչեան եւ Աւագ Թարգման՝ Տ. Վազգէն Վրդ. Ալէքեան:

Հինգշաբթի, 20 Փետրուար. Արեւմտեան շըրջանի եւ Կազաչի Եւրոպական միութեան ներկայացուցիչ՝ Տիար Ալեքսանտր Ստուցման ալցեւեց Երուսաղէմի Հայոց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Պատրիարքութեան Տնօրէն Ժողովի Ատենապետ՝ Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեանի, Կալուածոց տեսուչ՝ Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեանի եւ Դիւանապետ՝ Տ. Աղան Վրդ.

Գոգչեանի հետ:

Հանդիպման ընթացքին քննարկուեցան Երուսաղէմի քաղաքապետարանի կողմէ Հայոց Պատրիարքութեան գոյքի բռնագրաւման անարդար որոշման եւ Պատրիարքութեանս պարտադրուող անտրամաբանական ահուելի պարտքին առնչուող հարցեր:

Տիար Ալեքսանտր Ստուցման իր մտահոգութիւնն ու զօրակցութիւնը յայտնեց Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան:

Ուրբաթ, 21 Փետրուար. Ի պատիւ Երուսաղէմի Հնդհանուր Հիւպատոսներու, Երուսաղէմի Հայ Պատրիարք՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Արք. Մանուկեան ընթրիք տուաւ Պատրիարքարանիս մէջ:

Պատրաստեց՝ ՆԵՐՍԵՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԱԼՈՅԵԱՆ

